նիզակաջոջ նիզակաբեկ խաղ առնէին զինուորականս և զբովանդակ զօրն զայն մեծաւ ցնծութեամբ խրոխացան...»[69]։

Աղբյուրները գովասանքով են խոսում Լևոն Բ-ի ձիավարժության մասին. «...և էր սա (Լևոն Բ.) այր իմաստուն և հանճարեղ ձիավարժ հմուտ և ի զինուրութիւն քաջասիրտ...»[70]։

Ռուբեն Ռայմոնդ թագաժառանգի մասին Սմբատը գրում է. «...պատանի զեղեցկատեսիլ հասակաւ երկայն... ձիավարժ գովէլի, իշխանական ձևով պատկառելի»[71]։

Ձիավարժությամբ զբաղվել են նույնիսկ հոգևորական դասերը, որը Ներսես Շնորհալին իր «Թուղթ Ընդհանրական»-ում «մոլութիւն» է անվանում[72]։

Որ գոյություն է ունեցել գործող «հրահանգ ձիավարժութեան», այդ մասին է խոսում հետևյալ վկայությունը։ Հեթում Ա-ի որդին գերի է ընկնում մամլուկների ձեռքը։ Նրանց սուլթանը կազմակերպում է տոնահանդես, որին մասնակցում է նաև գերի Լևոնը։ «Այլ և ի ձիրնթացս ասպարիսի ելեալ,— գրում է Սամվել Անեցու շարունակողը,—ընդ Սուլթանին առավելագոյն գտաւ զամենայն զինուորս ի հրահանգս ձիավարժութեան... աղատել ի բանտէ և ի կալանաց»[73]։

Ինչպես վերևում հիշեցինք, թեև մեզ չի հասել «ձիավորեցուցանելու» ծիսակատարության ոչ մի ամբողջական նկարագրություն և ձիավարժության հրահանգ, սակայն գտնվել է 14-րդ դարի մի մատյան, որտեղ նկարագրված է ասպետների զենքի, զրահի, դրոշի և նշանակի մասին։ Մատյանը կրում է «զրահի սանձուց որ և Սլեհնոց և հագուցուց պատերազմականաց և մարտից յազգս իւրեանց» վերնագիրը։ Մատյանը սկսվում է այսպես. «Կնիք և օրհնութիւն աստուծոյ ամենակարողին հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյն եղիցի ի վերայ յայսմ զրահիցս և հագուցոյս և ի վերայ ականողին զսա, ի յորս առ հայելով արդարութեամբ զգեցցի նախախնամելով քո և ուղղելով Տէր Աստուած մեր որպեսզի զբարձողն սորաց պահեսցէ անվնաս և անվերկիւղ քաջամարտիկ և արիաբար զինագրել և անսայթաք մնալ ամրափակ աջով քո որ կենդանի ես և թագաւորես Աստուած յաւիտեանս յաւիտենից»[74]։

Հայ ձիավորների հագուստի և նշանի մասին Ղևոնդ Ալիշանը գրում է. «Նշան ձիաւորացս էր խաչ կարմիր՝ զպատկեր սրբոյն Վլասոյ ի միջին ունելով, զգեստ՝ ասուեայ սպիտակ»[75]։

Գերմանացի հեղինակ Շուներեկը կարծում է, որ հայ ձիավորը կրում էր կապույտ հանդերձանք՝ ոսկեղեն խաչով և հայկական այրուձիով[76]։ Մեզ թվում է, որ հայ ձիավորներն անպայման ունեցել են իրենց հատուկ զգեստը և նշանը և որ գուցե, այն որոշ չափով նման էր խաչակիր ասպետների հագուստին և նշանին։ Բավականին վկայություններ կան ձիավորների ձեռնադրության մասին։ Առաջին հայ ասպետը հիշատակվում է 12-րդ դարի սկզբին, որը Մսիսի

69 Ղ. Ա լ ի շ ա ն, Սիսուան, էջ 476։

70 «Սմբատ Սպարապետի Տարեգիրք», ի Վենետիկ, 1856, էջ 194։

71 «Սմբատ Սպարապետի պատմութիւն», 1856, Փարիզ, էջ 109։

72 «Թուղթ Ընդհանրական», 1865, էջ 52։

73 «Սամուէլ Անեցւոյ Պատմութեան շարունակող», Վաղարշապատ, 1893, էջ 222։

74 Ղ. Ա լ ի շ ա ն, Սիսուան, էջ 486։

75 Նույն տեղում։

76 Նույն տեղում։